լիս գործողին գետնին նստած՝ ոտները նրա մեջ իջեցնել և ոտներով որոշ գործողություններ կատարել։ Հորի աջ և ձախ կողմից գետնին ձգվում են զուգահեռ հաստ փայտեր, որոնց վրա ուղղահայաց նստեցրած են չորսական փայտե նեցուկներ իրար դիմաց։ Ետևի զույգ նեցուկների վրա հանգչում է հորիզոնական քառակող սլմէ (սլմի)[127], որի վրա ցցված է մի ձողիկ. աշխատողը նրա վրա հենվում է իր թէվֆէրավ և տակը հավաքում արդեն գործած կտավը։ Հաջորդ ավելի բարձր զույգ նեցուկների վրա դրված է բորբ՝ միջի փէտը հենց դիփիի տակ։ Երրորդ զույգ կարճլիկ նեցուկների վրա ձգված հորիզոնական փայտի վրա հանգչում են դիփիի փարգիրնէրը՝ ծնկները։ Առջևի զույգ նեցուկներն իրենց վրա կտրված փորվածքներով պահում են չորրորդ հորիզոնական կլորացրած ձողը՝ մաղլախը (սլմի), որն երբեմն պտույտ է գալիս փորվածքների մեջ։ Նրա վրայով անցնում է վերևից իջնող հենքը։ Հենքը ձգված է գործողի գլխին գրեթե առաստաղի մոտ պարանների օգնությամբ կախված կլոր ձողի վրայով՝ սարավ (բացրի սլմիավ) և իջնում է գործողի ետև։ Նրա ծայրը հանգուցված է պարանի հետ, որը կապվում է գործողի ետև պատի մեջ ցցված փայտե ցցի վրա։ Այսպիսով հենքի թելերն անցնում են պարանից սկսելով, նախ սարի և ապա մաղլախի վրայով և մտնում են դիփիի (դրֆայի) վերին և ստորին տախտակների մեջ անշարժ նստեցրած սանդրի և նրա ետևը կախված ասպի մատների միջով։ Ասպի երկու մասերը կախված են ելալանֆնէրի (ելանդուկնէրի) վրայով ձգված թելի երկու ծայրերից, իսկ տակից կապված են նույնպես բարակ պարաններով վրնդրատախտակնէրի (վոտնատախտակնէրի) հետ, որոնք գործողի ոտների ճնշումով հերթով վեր ու վար են շարժվում և շարժում են նաև ասպի երկու մասերը։ Դիփին կախված է ֆոդէրի (պահապանէրի) օգնությամբ, որոնք երկարացվում են և կարճացվում վրսկէրնէրի (վրսկորնէրի) օգնությամբ։

Գործողն իր կողքին գետնի վրա դնում էր թելի համար մասրա՝ տուփը։ Հենքի թելերի միջով խաչաձևվող թելը նա անց էր կացնում մուֆուֆավ (մուֆուֆավ)՝ մակույկով։ Ջանգեզուրի ջուլհակը հանում էր միապաղաղ և միագույն գործվածք միայն։ Ի՞նչ համեմատություն դրա և օրինակ՝ Շատախի շալ գործվածքի մեջ, որտեղ տարբեր գույնի թելերով հասնում էին նախշերի զարմանալի հարստության, նուրբ գեղեցկության և կտորի փայլի բազմերանգ խաղին։

Գործում էր թե՛ կինը, և թե՛ տղամարդը։ Լավ վարպետ աշխատողը կարողանում էր օրական գործել մինչև 6 մետր շալ կամ 3 մետր շալվար։ Այստեղ էլ վախենում էին ճամբանից և շար աչից պաշտպանված լինելու համար դնում էին մի չերևացող տեղում ջրով գավաթի մեջ ձու։

Քանի որ աշխատանքը կատարվում էր գետնին, թեկուզև մի ներքնակի վրա նստած, իսկ ոտներն իջած էին լինում հորի մեջ, որն այսպես թե այնպես միշտ խոնավ էր լինում, գործողները շարունակ ենթարկվում էին ոսկրացավ ստանալու վտանգին։

Կտավը կամ շալը ներկելու համար մեծ մասամբ դիմում էին մասնագետ արհեստավորներին, որոնք շիլէյի անէլու՝ կարմրացնելու համար գործ էին ածում տորոնը[128]. իսկ կնգնուտ գույն տվողները՝ կրասի նէրկարարնէրն էին (կարասի ներկարարներն էին)։

---

[127] Մասերի անունները բերված են Խնձորեսկի ենթաբարբառով, իսկ փակագծերի մեջ՝ Սիսիանի (Սիսավանի)։

[128] Rubia tinctorum.